

Մանուկներու Սուրբ Գիրքը  
կը ներկայացնէ

Պարտիզա  
անը եւ  
հունտը



Written by: Edward Hughes

Illustrated by: M. Maillot; Lazarus

Adapted by: E. Frischbutter; Sarah S.

Translated by: Most Rev. Prof. Varant Zareh Seropian  
dedicated to my Son Lordling Zareh Varant

funded by: Zareh Seropian & Sons Foundation

special thanks: to my wife

gifted to all the Armenian children around the world. This translation  
has been done in the Grace of the Holy Trinity to whom I owe.

Produced by: Bible for Children

[www.M1914.org](http://www.M1914.org)

©2012 Bible for Children, Inc.

License: You have the right to copy or print this story,  
as long as you do not sell it.



Օրին մեկը  
Յիսուս լիճին  
ափին

Նստած կը  
սորվեցներ:



Շատ մարդիկ  
հաւաքուած իրեն

մտիկ կ'ընէին:



Ժողովուրդին  
թիւը բազմացաւ:

Յիսուս արդեօք  
ի՞նչ կ'ընէր:



Մօտերը նաև մը  
տեսնելով, Յիսուս  
նաև բարձրացաւ:



Յիմա Ան կը տեսնէ  
Ժողովուրդը եւ անոնք  
ալ իրեն կը տեսնեն  
եւ Չինք

Կ'իմանան:



Յիսուս սկսաւ պատմել  
պատմութիւններ  
սովորական բաներու  
մասին, ...







... որոնք ժողովուրդին կը  
սորվեցնեն Աստուծոյ  
մասին:



"Պարտիզպան մը հունտեր  
կը սրսկեր իր դաշտին մէջ":



Յիսուսին պատմութիւնը  
նկարի պէս էր բառերով եւ  
ոչ թէ գծագրութեամբ:




Ժողովուրդը կրնար նկատել  
իր մտքին մեջ, որովհետեւ  
շատ անգամներ կը  
տեսնէին:





Սրսկուած  
հունտերէն  
ոտքի ճամբու վրայ  
կ'իյնային:





Աւա՛ղ, թռչունները  
արագօրէն վար կու  
գային եւ կ'ուտէին  
հունտերը:



Կարգ մը հունտեր  
ժայռերուն վրայ կ'իյնային:  
Անոնք արագօրէն  
մեծցան եւ  
կարճ բոյսերու  
վերածուեցան:



Տաք արեւը յանկարծ կը  
չորցնէ զանոնք, որովհետեւ  
անոնք չեն կրնար իրենց  
արմատները  
խոր թափանցել  
հողին մէջ:





Ուրիշ

հունտեր արմատ  
կը գտնեին  
փուշերուն  
մէջ: Ան ծիւ  
ջի տար հոն:



Փուշերը կը

պաշարեն երիտասարդ

բոյսը անոր

վրայ գոցելով

եւ արգիլելով


արեւ եւ անձրեւ:



Մնացեալ հունտերը լաւ  
գետնի վրայ ինկան: Ժամանակ  
անցնելէ ետք, անոնք մեծցան  
արողջ բոյսերու ահագին  
նոր հունտեր  
շալկելով:



Պարտիզպանը շատ  
ուրախ պետք էր որ ըլլար:



Պատմութեան ակարտին,  
աշակերտները հարց տուին

Յիսուսին.




"Ինչո՞ւ կը սորվեցնես":  
Յիսուս ըսաւ.



Առակաները կ'օգնեն ժողովուրդը, ...



... որպէսզի հասկնան Աստուծոյ  
մասին, եթէ անոնք Չայն իրաւ կը  
սիրեն:





Ժողովուրդը, որ չի սիրեր Աստուծոյ,  
չի կրնար հասկնալ առակաները:




Յիսուս բացատրեց:  
Ան ըսաւ, որ այդ հոլնտը

Աստուծոյ  
խօսքն է:



Հունտը, որ ոտքի  
ճամբուն վրայ է, կը նմանի

մեկու մը,  
որ կը լսէ, ...




... բայց չի հասկնար  
Աստուծոյ խօսքը:



Սատանան կը ձգէ, որ  
մոռնան, ինչ որ

Աստուած  
տո՛ւաւ:



Շատեր շուտով կ'ըմբռնեն  
Աստուծոյ խօսքը: Անոնք կը  
սմանին այն հունտին,  
որ ժայռոտ հողի  
վրայ է:



Բայց անմիջապես, որ  
մեկը ծիծաղի իրենց վրայ  
կամ դժուարություն  
հանդիպին, ...




... որովհետեւ Աստուծոյ  
կը սիրեն, ցաւալի բան  
մը կը պատահի:






Այս նոյն մարդիկը, որոնք  
հաճոյքով սկսան հետեւիլ  
Յիսուսին, յանկարծ զայն կը  
թողուն եւ Աստուծոյ խօսքին չեն

հնազանդիր:



Չէն ուզեր գինը վճառել Աստուծոյ  
հնազանդելու: Ինչ թշուառ  
են, որոնք կ'ուզեն իրենց  
բարեկամը գոհացնել քան



Աստուած:



Փուշերը

առակին

մեջ աշխարհի

հոգերուն

սման են եւ

դրամի սերը, կարգ

մը մարդոց

կեանքը կը

լեցնէ:




Անոնք  
այնքան  
զբաղուած են  
դրամ թիզելու,  
որ ժամանակ  
չունին Աստուծոյ  
եւ զայն դուրս  
դրած են իրենց  
կեանքէն:



Սակայն հունտը, որ լաւ հողին  
մէջ կ'իյնայ եւ լաւ հունձք կու տայ  
կը նմանի Աստուծոյ խօսքին, որ կը  
թափանցէ սիրտերը եւ կը փոխէ  
մարդոց կեանքը:



Այս մարդիկը կը ծառայեն  
եւ կը յարգեն Աստուծոյ:



Բազմութիւնը չէր ուզեր  
ձգել: Շատեր կ'ուզէին հետեւիլ  
Աստուծոյ եւ Ասոր գոհացնել  
Յիսուսի առակները, ...



... անոնց օգնեցին, որպեսզի  
հասկնան ինչպես հնազանդին  
Աստուծոյ:





Պարտիզպանը եւ հունտը

Աստուծոյ խօսքէն պատմութիւն մը,  
Սուրբ Գիրքը:

Կը գտնուի հետեւեալին մէջ

Մատթէոս 13

"Քու խօսքիդ մուտքը լոյս կը ցոլացնէ:"  
Մադնոս 119:130



վերջ



Այս Սուրբ Գիրքի պատմութիւնը մեզի կը պատմէ մեր հրաշալի Աստուծոյ մասին, որ մեզ ստեղծեց եւ կ'ուզէ, որ մենք զինք ճանչնանք:

-Աստուած գիտէ, թէ շատ գէշ բաներ ըրած ենք, որոնք ինք մեղք կը կոչէ: Մեղքին պատիժը մահն է, սակայն Աստուած այնքան մեզ կը սիրէ, որ իր Որդին Յիսուսը մեզի դրկեց, որպէսզի խաչին վրայ մեռնի եւ մեր մեղքերուն համար պատժուի: Ետքը Յիսուս համբարձաւ եւ դրախտ՝ իր տունը բարձրացաւ: Եթէ կը հաւատաս Յիսուսին եւ իրմէ կը պահանջես որպէսզի ներէ քեզի քու մեղքերուդ համար, Ան կը ներէ: Ան կու գայ եւ մէջդ կը բնակի իսկ դուն յաւիտեան իր հետ:



Եթէ կ'ուզես մեղքերէդ ազատիլ, հետեւեալը  
ըսէ Աստուծոյ: Տէր Աստուած ես կը  
հաւատամ, որ Յիսուս մահացաւ ինծի  
համար եւ հիմա Ան անգամ մը եւս կ'ապրի:  
Կ'աղաչեմ, որ գաս իմ կեանքիս մէջ եւ ներես  
բոլոր մեղքերս, որպէսզի կարենամ նոր  
կեանք մը ապրիլ, եւ օր մը հետդ ըլլամ,  
յաւիտեան: Օգնէ ինծի որպէսզի քեզի  
համար ապրիմ քու որդիիդ պէս: Ամէն:

Կարդայ Սուրբ գիրքը եւ ամէն  
օր Աստուծոյ հետ խօսիր:  
Յովհաննու 3:16

